ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 15-Լ

«08» 04 2026 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2026 թվականի մարտի 7-ի նիստում քննարկել է Հայաստանի Հանրապետության դատախազության 2025 թվականի աշխատանքի արդյունքները և ընդունել համապատասխան որոշում, որի կենսագործումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2026 թվականի մարտի 7-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (2026 թվականի մարտի 7-ի նիստի N 1 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱԼԵՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2026 թվականի մարտի 7-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը:

Մասնակցում էին՝

Կոլեգիայի անդամներ՝ Ա. Արամյանը, Լ. Գրիգորյանը, Ե. Ավագյանը, Էդ. Արսենյանը, Գ. Էլիզբարյանը, Լ. Չարխիֆալակյանը, Վ. Ղահրամանյանը, Ա. Գրիգորյանը, Ա.Փանոսյանը, Լ. Մանուկյանը, Տ. Սարուխանյանը, Ս. Հակոբյանը, Հ. Հովհաննիսյանը, Կ. Սերոբյանը, Մ. Մկրտչյանը:

Ներկա էին՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնակատար Ն. Մովսիսյանը, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնակատար Մ. Հակոբյանը, ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ զինվորական կենտրոնական բաժինների պետերը, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, այլ դատախազներ, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը և վերջինիս տեղակալները, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ դատախազության 2025 թվականի աշխատանքների ամփոփում:
2. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության՝ 2025 թվականի աշխատանքների ամփոփում:
3. Դատախազների, դատախազությունում քաղաքացիական ծառայության և հայեցողական պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող անձանց շրջանում անցկացված անանուն հարցման արդյունքների ներկայացում:
4. Առաջին անգամ դատախազի պաշտոն ստանձնող դատախազների երդման արարողություն:

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանն անդրադարձավ ՀՀ դատախազության հանրային վարկանիշին. համաձայն Միջազգային հանրապետական ինստիտուտի նախաձեռնությամբ Հայաստանում իրականացված հանրային կարծիքի ուսումնասիրության՝ ՀՀ դատախազության աշխատանքից «լիովին գոհ» և «ավելի շուտ գոհ» է ՀՀ քաղաքացիների 43%-ը: Նախորդ հարցման համեմատ՝ գոհունակության ցուցանիշն աճել է 6%-ով:

Ա.Վարդապետյանը, ամփոփելով 2026 թվականի ընթացքում իր կողմից Երևան քաղաքի վարչական շրջաններ և մարզային դատախազություններ կատարված այցերի արդյունքները,

ընդգծեց, որ բոլոր այն ուղենիշները, որ նախատեսվել էին ստորաբաժանումների աշխատանքի համար, հետևողականորեն իրականացվում են:

Անդրադառնալով մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների աշխատանքի գնահատմանը, համաձայն որի՝ 2025 թվականին կատարված աշխատանքի արդյունքներով 1-ին հորիզոնականը զբաղեցրել է Սյունիքի մարզի դատախազությունը, Ա.Վարդապետյանը շնորհավորեց Սյունիքի մարզի դատախազությանը՝ մարզի դատախազի գլխավորությամբ, և ընդգծեց, որ այս նվաճումը նպատակ սահմանելու և այդ նպատակի իրականացմանը հասնելու օրինակ է:

Ա.Վարդապետյանը շնորհավորեց նաև 2-րդ և 3-րդ հորիզոնականները հավասար միավորներով կիսած՝ Գեղարքունիքի մարզի դատախազությանն ու Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությանը, ինչպես նաև 4-րդ հորիզոնականը զբաղեցրած Լոռու մարզի դատախազությանն ու 5-րդ հորիզոնականը զբաղեցրած Արարատի մարզի դատախազությանը:

1. **<u>Օրակարգի 1-ին հարցով</u> զեկուցողներ՝**

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա. Արամյան, Լ. Գրիգորյան, Ե. Ավագյան, Էդ. Արսենյան, Գ. Էլիզբարյան:

Լսեցին՝ Ա. Արամյանին, Լ. Գրիգորյանին, Ե. Ավագյանին, Էդ. Արսենյանին, Գ. Էլիզբարյանին:

Արտահայտվեց՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա. Արամյանի, Լ. Գրիգորյանի, Ե. Ավագյանի, Էդ. Արսենյանի և Գ. Էլիզբարյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2025 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ դատախազության ստորաբաժանումները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

2025 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության հսկողությամբ քննվող քրեական վարույթներով վերականգնվել է 30 միլիարդ 341 միլիոն 581 հազար դրամի վնաս: Ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է 15 միլիարդ 463 միլիոն 560 հազար դրամ: Պետությանը պատճառված վնասի վերականգնումներ են կատարվել Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր նախկին դեսպան Միքայել Մինասյանի, ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի եղբոր, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Կարո Կարապետյանի ընտանիքի անդամների, նախկին պատգամավորներ Նահապետ Գևորգյանի,

Հարություն Փամբուկյանի և նրանց ընտանիքի անդամների կողմից կատարված հանցանքների վերաբերյալ քննվող ու մի շարք այլ քրեական վարույթների շրջանակներում:

Նախորդ տարիների համեմատ՝ աճել է խոշտանգման ու վատ վերաբերմունքի այլ դրսևորում հանդիսացող՝ պաշտոնատար անձի կողմից բռնություն գործադրելով զուգորդված լիազորությունների անցման դեպքերով դատարան ուղարկված քրեական վարույթների և մեղադրյալների թիվը: 2025 թվականի ընթացքում **ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից** դատարան է ուղարկվել 14 քրեական վարույթ 22 անձի վերաբերյալ: Այլ խոսքով՝ նախորդ տարվա համեմատ կրկնակի աճ է գրանցվել:

ՀՀ ողջ տարածքում նվազել են պաշտոնատար անձանց օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու դեպքերը: Նշված հանցատեսակի նվազումը տարեցտարի կրում է շարունակական բնույթ: Մասնավորապես՝ 2023 թվականին արձանագրվել է 141 դեպք, 2024 թվականին՝ 111 դեպք, իսկ 2025 թվականին՝ 87 դեպք: Բացահայտումը, ինչպես և 2024 թվականին, կազմել է 100 տոկոս:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից հաշվետու ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել համացանցի, տեղեկատվական և հեռահաղորդակցման համակարգերի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար մեղադրվող 24 անձի վերաբերյալ 11 քրեական վարույթ: 11 քրեական վարույթներով հանցավոր գործունեության շրջանակում արձանագրված ընդհանուր դրամաշրջանառությունը կազմել է շուրջ 5 միլիարդ 108 միլիոն 634 հազար դրամ:

Ներքին գործերի նախարարության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնում արձանագրված տվյալների համաձայն՝ **մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը** 2025 թվականի ընթացքում նվազել է 23.2%-ով, իսկ առանց հանկարծամահության դեպքերի՝ 25.7%-ով: Նվազումն արձանագրվել է ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: 2025 թվականի ընթացքում 36.7%-ով նվազել են առողջությանը վնաս պատճառելու դեպքերը (2025 թվականին՝ 737 դեպք, 2024 թվականին՝ 1164 դեպք): 57 դեպքով նվազել է առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի թիվը (2025 թվականին՝ 221 դեպք, 2024 թվականին՝ 278):

2025 թվականին դատարաններում ՀՀ դատախազության ստորաբաժանումների՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով ավարտվել է 769 գործ՝ 872 անձի վերաբերյալ, կայացվել է 619 մեղադրական դատավճիռ՝ 679 անձի վերաբերյալ:

Գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից անմիջական դատավարական հսկողություն իրականացվող քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասից 2025 թվականի ընթացքում վերականգնվել է 1 միլիարդ 49 միլիոն 597 հազար դրամը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասից վերականգնվել է 32 միլիոն 475 հազար դրամը: Բացի այդ, 2025 թվականին բավարարվել է 2024 թվականին քրեական վարույթով դատարան ներկայացված՝ 127 միլիոն 118 հազար դրամի գույքային հայցը:

2025 թվականի ընթացքում, 2024 թվականի համեմատ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 13.7%-ով նվազում (2025 թվականին՝ 10.400 դեպք, 2024 թվականին՝ 12.050). Երևանում դեպքերը նվազել են 653-ով կամ 8.9%-ով:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2025 թվականին կատարվել է 298 ուսումնասիրություն, հայտնաբերվել է 390 իրավախախտում, ներկայացվել է 9 միջնորդագիր, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 236 հայց, ներկայացվել է հանցանքի մասին 60 հաղորդում, որոնցով արձանագրված ընդհանուր վնասը կազմել է 13 միլիարդ 934 միլիոն դրամ:

2025 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության Պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքին են վերադարձվել և Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականության իրավունքն է գրանցվել 30 միավոր անշարժ գույքի նկատմամբ, որոնց շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 5 միլիարդ 870 միլիոն դրամ:

2025 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ներկայացված հայցերով կայացված 15 վճիռներով պետության սեփականության իրավունքն է գրանցվել՝

- Արմավիրի մարզում՝ 6 հա, Գեղարքունիքի մարզում՝ 1.5 հա, Տավուշի մարզում՝ 3 հա, Լոռու մարզում՝ 4 հա, Կոտայքի մարզում՝ 3.8 հա «հատուկ պահպանվող» և «բնապահպանական» գործառնական նշանակության հողատարածքների նկատմամբ,
- Երևանում՝ Գ.Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող «անտառային, բնակավայրերի» նպատակային նշանակության շուրջ 6 հա մակերեսով 6 հողամասերի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում, Նուբարաշենում՝ 2 հողատարածքների նկատմամբ,
- Ընդհանուր՝ 1 միլիարդ 640 միլիոն դրամ շուկայական արժեքով Երևան քաղաքի Ղափանցյան 59 հասցեում գտնվող շուրջ 2.8 հա մակերեսով հողատարածքի, հյուրանոցի, և այլ կառույցների, ինչպես նաև Ղափանցյան 59/11 հասցեի 0.04 հա հողամասի նկատմամբ:

Դատարանի 3 վճիռներով համայնքների սեփականության իրավունքն է վերականգնվել Վայոց ձորի մարզում գտնվող 1.66 հա «գյուղատնտեսական», «բնակավայրերի» նշանակության 4 հողամասերի, Լոռու մարզում՝ 0.07 հա մակերեսով «բնակավայրերի» նպատակային նշանակության հողամասի նկատմամբ: Բացի այդ, դատարանի 9 բավարարված հայցերով և կիրառված դատախազական ներգործության միջոցներով Տավուշի մարզի Իջևան համայնքում 10 հողամասեր՝ ընդհանուր 4.164 քմ մակերեսով, Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2 հողամասեր՝ ընդհանուր 16.591 քմ մակերեսով, Սյունիքի մարզի Կապան համայնքում 1 հողամաս՝ 4.16 հա մակերեսով, կառուցապատման իրավունքի դադարեցմամբ վերադարձվել են համայնքներին:

2025 թվականին պետական, համայնքային շահի պաշտպանության լիազորության շրջանակներում առաջընթաց է արձանագրվել նաև ՀՀ դատախազության մյուս ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքներում: Մասնավորապես՝ հաշվետու

ժամանակահատվածում մարզերի, Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազությունների կողմից կատարվել է 242 ուսումնասիրություն, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 29 անձ, ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել է 22 հաղորդում և միջնորդագիր, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 114 հայց՝ ընդհանուր 998 միլիոն 391 հազար դրամ բռնագանձելու պահանջով, ներկայացվել է հանցանքի մասին 32 հաղորդում:

Դատախազության՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ լիազորության շրջանակներում ներկայացված հայցերով կայացված վճիռներով, կնքված հաշտության համաձայնություններով և կիրառված դատախազական ներգործության միջոցներով 2025 թվականին **պետության, համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել, ինչպես նաև պետության, համայնքի փաստացի տիրապետմանն է վերադարձվել շուրջ 66 միլիարդ 934 միլիոն դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 124 գույք,** այդ թվում՝ մանկապարտեզներ, մշակույթի տուն, մարզադաշտ, բնության հուշարձան, պուրակներ, հողատարածքներ և դրամական միջոցներ:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում 2025 թվականի ընթացքում ուղարկվել է 309, ստացվել է 291 իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություն, ՀՀ իրավասու մարմինների կողմից ուղարկվել է հանձնելու մասին 81 միջնորդություն: Ներկայացված միջնորդություններից 22-ը բավարարվել են, 13-ը՝ մերժվել, 46-ը գտնվում են քննարկման փուլում, բավարարվել են նաև նախկինում ներկայացված միջնորդություններից ևս 6-ը, մերժվել՝ 5-ը:

Իրավական ապահովման ոլորտում 2025 թվականին կատարված աշխատանքներից կարևորվել է Դատախազության կողմից նախապատրաստված և իրավասու պետական մարմիններ ուղարկված օրենսդրական 3 նախաձեռնությունները, դատախազի աշխատանքի մասին վիճակագրության էլեկտրոնային համակարգի մշակումը, քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Դատախազության ստորաբաժանումներից ստացված 12 զեկուցագրերի վերլուծության հիման վրա՝ նախապատրաստվել և իրավասու մարմիններին է ուղարկվել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու 17 միջնորդություն: Ներկայացված 17 միջնորդություններից 3-ը քննարկման փուլում են, 8-ի դեպքում կարգապահական վարույթ չի հարուցվել, 6-ի դեպքում հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից 1-ի արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին հայտարարվել է խիստ նկատողություն, 5-ի դեպքում՝ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից 2025 թվականին կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում, հայտնաբերվել է 162 խախտում: Ստուգմամբ արձանագրված օրենսդրությանը հակասող ակտերի վերաբերյալ ներկայացվել է 69 միջնորդագիր: Օրենսդրությանը հակասող 2 ակտ կասեցվել է, ծառայողական քննություն իրականացնելու վերաբերյալ ներկայացվել է 19 միջնորդագիր:

Պրոբացիայի ծառայությունում իրականացվել է 6 ուսումնասիրություն արձանագրվել է 6 խախտում: Ստուգմամբ արձանագրված օրենսդրությանը հակասող ակտերի վերաբերյալ ներկայացված թվով 69 միջնորդագրերից 23-ը բավարարվել և վերանայվել, իսկ 46-ը՝ թողնվել է անփոփոխ:

2025 թվականին իրականացվել է 10 կարգապահական վարույթ՝ 11 դատախազի նկատմամբ, տեղի է ունեցել հանձնաժողովի 3 նիստ՝ 3 դատախազի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերով: Բոլոր նիստերի արդյունքներով կայացվել է որոշում կարգապահական խախտման փաստը և դրանում դատախազի մեղավորությունը հաստատելու մասին, որոնցից ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով՝

- 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն»,
- 1 դատախազի նկատմամբ «խիստ նկատողություն»,
- 1 դատախազի նկատմամբ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ:

2025 թվականին հրատարակվել է «**Օրինականություն» գիտագործնական պարբերականի 2 համար՝ 28 հոդվածով,** բոլոր հոդվածներին միջազգային կազմակերպության կողմից շնորհվել են կոդեր:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից միայն 2025 թվականին նախաձեռնվել է 157 ուսումնասիրություն, դատարան է ներկայացվել 42 հայցադիմում: Այդ հայցադիմումներից ներկայում քննվող 38-ով պահանջվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 230 անշարժ գույք, 68 շարժական գույք, 76 իրավաբանական անձանցում մասնակցություն: 38 հայցերով դրամական պահանջը 31 միլիարդ 540 միլիոն դրամ է, իսկ ընդհանուր հայցագինը՝ 35 միլիարդ 993 միլիոն դրամ:

2025 թվականին կնքվել է հաշտության մեկ համաձայնություն, որի արդյունքում որպես ապօրինի ծագում ունեցող գույք՝ Հայաստանի Հանրապետության օգտին բռնագանձման է ենթակա 87 միլիոն 622 հազար դրամ. 87 միլիոն 622 հազար դրամից 68 միլիոն 811 հազար դրամը բռնագանձվել է:

2025 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 2248 դեպք: Արձանագրված դեպքերից 1027-ը կամ 45.7%-ը եղել են պատահարներ, 1221-ը կամ 54.3%-ը՝ ենթադրյալ հանցագործության դեպքեր: Նվազում է արձանագրվել 110 դեպքով կամ 8.3%-ով:

2024 թվականի համեմատ՝ 2025 թվականին ծանր հանցագործությունները նվազել են 48-ով կամ 26.9%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 26-ով կամ 66.7%-ով:

2025 թվականին ՀՀ զինված ուժերում սպանության դեպք չի արձանագրվել:

2025 թվականին արձանագրվել են ծառայության հետ կապված մահվան հետևյալ դեպքերը՝ ժամկետային 6 զինծառայող, ԱԱԾ սահմանապահ զորքերի 2 ժամկետային զինծառայող և 1 աշխարհազորային:

2025 թվականի ընթացքում քննչական մարմինների վարույթներում քննվող, քննված քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասը կազմել է 411 միլիոն 728 հազար դրամ (2024 թվականի՝ 1 միլիարդ 479 միլիոն 117 հազար դրամ), որից մինչդատական վարույթում քննված քրեական վարույթներով վերականգնվել է 108 միլիոն 712 հազար դրամը (2024 թվականին՝ 51 միլիոն 935 հազար դրամ):

Բացի այդ, դատական ակտերի կատարման վարույթով վերականգնվել է պետությանը պատճառված 1 միլիոն 300 հազար դրամը:

2025 թվականին ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարան է հանձնվել 943 քրեական գործ՝ 1070 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 905 գործ՝ 1027 անձի վերաբերյալ):

2025 թվականին 856 քրեական գործ՝ 951 անձի վերաբերյալ քննվել և ավարտվել է դատարանում, որից 708 քրեական գործերի դատաքննությունն ավարտվել է մեղադրական դատավճռի կայացմամբ. դատապարտվել է 785 անձ:

Զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից 2025 թվականին իրականացված 280 ուսումնասիրություններով արձանագրվել է պետությանը պատճառված՝ 1 միլիարդ 432 միլիոն 493 հազար դրամի վնաս (2024 թվականին՝ 5 միլիարդ 677 միլիոն 550 հազար դրամ): 2025 թվականին վերականգնվել է պետությանը պատճառված 938 միլիոն 80 հազար դրամի վնասը, որից 924 միլիոն 294 հազար դրամը պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից վերականգնվել է արտադատական կարգով:

2024 թվականին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված վնասներից 2025 թվականի ընթացքում վերականգնվել է 92 միլիոն 213 հազար դրամը:

2025 թվականի ընթացքում զինվորական դատախազների կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցվել է 24 հայց (2024 թվականին՝ 19 հայց): 24 հայցերով բռնագանձման ընդհանուր պահանջը 4 միլիարդ 564 միլիոն 117 հազար դրամ է:

2. <u>Օրակարգի 2-րդ հարցով</u> զեկուցմամբ հանդես եկավ Ա. Փանոսյանը.

Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից 2025 թվականին մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 256 վարույթ՝ 628 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 159 քրեական վարույթ՝ 370 անձի վերաբերյալ): Մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվն ավելացել է 97-ով կամ շուրջ 60%-ով, իսկ նշված վարույթներով մեղադրվող անձանց թիվն ավելացել է 264-ով կամ 69%-ով:

Հակակոռուպցիոն կոմիտեում 2025 թվականի ընթացքում նախաքննությունն ավարտված քրեական վարույթներով պատճառված ընդհանուր գույքային վնասից հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է 1 միլիարդ 642 միլիոն 887 հազար դրամը:

Վարչության դատախազների հսկողությամբ քննվող ընթացիկ քրեական վարույթներով 2025 թվականին վերականգնվել է 726 միլիոն 430 հազար դրամ: 2024 թվականին ավարտված քրեական վարույթներով պատճառված ընդհանուր վնասից նախաքննության ընթացքում

փաստացի դրամական տեսքով վերականգնվել էր 477 միլիոն 556 հազար դրամը: Այսինքն, կոռուպցիոն գործերով 2025 թվականին վերականգնված գումարի չափը շուրջ 4 անգամ գերազանցել է 2024 թվականի ցուցանիշը:

2025 թվականին դատարաններում ավարտվել է 106 քրեական գործ՝ 180 անձի վերաբերյալ, իսկ 2024 թվականին՝ 116 քրեական գործ 242 անձի վերաբերյալ:

Դատարանում ավարտված 106 քրեական գործերից 2-ը եղել է առանձնապես ծանր, 30-ը՝ ծանր, 65-ը՝ միջին ծանրության, իսկ 9-ը՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ:

Ավարտված 106 քրեական գործերից 89-ով դատապարտվել է 158 անձ, որոնցից 38-ը՝ ծանր, 108-ը՝ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար, իսկ 12՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար: Այդ թվում՝ 16 անձ դատապարտվել է ազատազրկման, 27-ը՝ տուգանքի, 5-ը՝ այլ պատժի: 110 անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

3. **<u>Օրակարգի 3-րդ հարցով՝</u>** ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը և ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ Լալա Բեգոյանը ներկայացրեցին 2025 թվականի ընթացքում դատախազների, դատախազության քաղաքացիական ծառայողների, հայեցողական պաշտոն զբաղեցնող և քաղաքացիական աշխատանք կատարող անձանց շրջանում անցկացված անանուն հարցման արդյունքները:

Դատախազության 2025 թվականի աշխատանքների ամփոփումները եզրափակելով՝ Ա.Վարդապետյանը տվեց մի շարք հանձնարարականներ: Ա.Վարդապետյանը կարևորեց նաև դատախազության աշխատակիցների՝ ավելի պատասխանատու, ուշադիր, բարեկիրթ լինելու հրամայականը՝ նշելով, որ ՀՀ դատախազությունը, չնայած բոլոր սադրանքներին, միշտ լինելու է բարեկիրթ, հարգալից և պրոֆեսիոնալ:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

1.1 միջազգային հետախուզումների վերաբերյալ ամփոփ տվյալները Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, ստացված տվյալները փոխանցել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Գ. Էլիզբարյանին, Ա. Արամյանին և Լ. Գրիգորյանին՝ ըստ համակարգման ոլորտների, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությունների պետերին՝ ըստ իրավասությունների ոլորտների,

1.2 ապահովել «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգում անձի նկատմամբ հետախուզում հայտարարված լինելու տվյալները ներառելու հնարավորությունը, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների հասանելիությունը նշված համակարգին,

1.3 «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգում անձի նկատմամբ հետախուզում հայտարարվելու վերաբերյալ տվյալները ներառելու գործիքն ակտիվացվելուց և միջազգային հետախուզումների վերաբերյալ ամփոփ տվյալները Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, հետախուզումների վերաբերյալ ամփոփ տվյալներն ուղարկել ՀՀ դատախազության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ:

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Գ. Էլիզբարյանին, Ա. Արամյանին և Լ. Գրիգորյանին, ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությունների պետերին՝ սույն որոշման 1.1-ին ենթակետում նշված տվյալները ստանալուց հետո՝ 6-ամսյա ժամկետում, պարզել նշված քրեական վարույթներով մեղադրյալների նկատմամբ միջպետական և միջազգային հետախուզում հայտարարելու հիմքերի առկայությունը և ապահովել հետախուզում հայտարարելու գործընթացը: Միջպետական և միջազգային հետախուզում հայտարարելու հիմքերի բացակայության դեպքում այդ մասին զեկուցագրով հայտնել ՀՀ գլխավոր դատախազին:

3. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի դատախազին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին՝

3.1 սույն որոշման 1.3-րդ ենթակետով նախատեսված տվյալները ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ապահովել վերաբերելի քրեական վարույթների տվյալների ներբեռնումը «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգ, իսկ հետախուզվողների հայտնաբերման կամ հետախուզումը դադարեցնելու դեպքերում՝ հընթացս ապահովել համապատասխան տվյալների թարմացումը,

3.2 քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման վերաբերյալ նյութերը ստացվելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունից գրություն ստանալիս՝ համապատասխան նախաքննության մարմնից անհապաղ պահանջել ստացված նյութերը, ապահովել նախնական ուսումնասիրություն և ուսումնասիրության արդյունքներով սահմանել նյութերի թարգմանության առաջնահերթություն՝ ելնելով քրեական վարույթի քննության շահերից:

4. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝ սույն որոշման 3.1-ին ենթակետով նախատեսված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ «Դատախազի

աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգում անձի նկատմամբ հետախուզում հայտարարված լինելու վերաբերյալ տվյալները ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից լրացվածության վերաբերյալ:

Սույն ենթակետի առաջին պարբերությամբ նախատեսված զեկուցագիրը ներկայացնելուց հետո, վեցամսյա պարբերականությամբ, ՀՀ գլխավոր դատախազին զեկուցագիր ներկայացնել «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգում անձի նկատմամբ հետախուզում հայտարարված լինելու թարմացված տվյալների և ՀՀ ՆԳՆ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնում առկա տվյալների համադրման արդյունքների վերաբերյալ:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ՝

Երդման տեքստն ընթերցեցին և ստորագրեցին՝

1. Հայկ Տիգրանի Ժամակոչյան - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ,
2. Կարո Սերգեյի Շիրվանյան - Շիրակի կայազորի զինվորական դատախազության դատախազ,
3. Էդգար Աշոտի Թովմասյան - Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ,
4. Ռոբերտ Տիգրանի Մկրտչյան - Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ,
5. Վահե Յուրիկի Մովսիսյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,
6. Գևորգ Ռուբենի Խաչատրյան - Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ,
7. Հրաչյա Արտաշեսի Նազարյան - Արարատի մարզի դատախազության դատախազ,
8. Արգիշտի Գառնիկի Պետրոսյան - Երևան քաղաքի դատախազության դատախազի պաշտոնին գործուղված Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,
9. Հռիփսիմե Խաչիկի Ասատրյան - ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ,
10. Ավագ Արթուրի Հարությունյան - Սիսիանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,
11. Սերգեյ Գագիկի Առաքելյան - ՀՀ գլխավոր դատախազության առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության պետի տեղակալի պաշտոնին գործուղված Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,
12. Խաչատուր Լևոնի Գալստյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի պաշտոնին գործուղված Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազ,
13. Նորայր Վարդանի Հարությունյան - Արագածոտնի մարզի դատախազության դատախազ,
14. Դավիթ Անդրանիկի Խաչատրյան - Տավուշի մարզի դատախազության դատախազ,

15. Ռազմիկ Գագիկի Մինասյան - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ,

16. Վահե Լևոնի Գասպարյան - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ,

17. Դավիթ Սումբատի Բաղալյան - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ,

18. Քրիստինե Գարիկի Մանուկյան - ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ,

19. Արման Ապետնակի Մանուչարյան - ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ,

20. Միլենա Կարենի Տոնեյան - ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ,

21. Անահիտ Մարտունի Բաղդասարյան - Կոտայքի մարզի դատախազության դատախազ,

22. Գոհար Նորիկի Արասխանյան - ՀՀ գլխավոր դատախազության առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության դատախազի պաշտոնին գործուղված Երևանի քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ,

23. Միլենա Արտակի Մանուկյան - ՀՀ գլխավոր դատախազության առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության դատախազի պաշտոնին գործուղված Երևանի քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ,

24. Արտաշես Սամվելի Մաիլյան - ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի պաշտոնին գործուղված Սիսիանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

25. Արսեն Վահրամի Թումանյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ,

26. Նարեկ Միսակի Մենդիկյան - Երևան քաղաքի դատախազության դատախազի պաշտոնին գործուղված Տավուշի մարզի դատախազության դատախազ,

27. Նորայր Սարգսի Այվազյան - Երևան քաղաքի դատախազության դատախազի պաշտոնին գործուղված Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ,

28. Արտավազդ Աշոտի Ասատրյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

29. Գրիգոր Ադամի Մանուչարյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

30. Տիգրան Գարիկի Բաղալյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

31. Սամվել Մակարի Կարապետյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,

32. Կարոլինա Ղուկասի Հարությունյան - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության դատախազի պաշտոնին գործուղված Լոռու մարզի դատախազության դատախազ,

33. Գրիգոր Գրիգորի Ալեքսանյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,

34. Մերի Արթուրի Երիցյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

35. Ֆրիդա Արմենի Այվազյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

36. Վազգեն Հրայրի Մկրտչյան - Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ,

37. Հենրիկ Անդրանիկի Անտոնյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

38. Նորայր Արայիկի Շահինյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,

39. Հայկ Արամի Սարգսյան - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության դատախազի պաշտոնին գործուղված Լոռու մարզի դատախազության դատախազ,

40. Տաթևիկ Էդգարի Հովհաննիսյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

41. Տաթևիկ Վարդանի Ավագյան - Արագածոտնի մարզի դատախազության դատախազ,

42. Կնյազ Մարտինի Կնյազյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

43. Ալիսա Մանվելի Սմբատյան -Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Մ. ՄԿՐՏՉՅԱՆ**